

Կ-100-11.04.2019-ՏՏԳԲ-011

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հունիսի 4-ի ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 30.1-րդ հոդվածը լրացնել նոր 2-4-րդ մասերով.

«Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված մերժման հիմքերից բացի նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերը մերժվում են նաև, եթե՝

- 1) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը նախատեսվում է այն գետերի վրա՝
  - ա. որոնցում առկա են Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր.
  - բ. որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է.
  - գ. որոնց վրա կան ջրաչափական դիտակետեր և նախատեսվող ջրառի և ջրահեռացման միջերը շրջանցում են ջրաչափական դիտակետերը:

- 2) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումն իրականացվում է՝
  - ա. Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում,
  - բ. բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտիներում,
  - գ. բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում,
  - դ. ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիներում,
  - ե. գետերի հոսքի ձևավորման տարածքներում,
  - զ. գետահատվածներում, որտեղ առկա են սողանքային տարածքներ,
  - է. անտառային հողերում կամ տարածքներում, որտեղ շինարարական տարածքին մոտեցող ճանապարհներ կառուցելու նպատակով առաջանում է ծառեր հատելու անհրաժեշտություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 20-րդ հոդվածով նախատեսված պետական անտառային հողերում աշխատանքների իրականացման համաձայնության առկայության դեպքերի:

Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված գետերի ցանկը սահմանում է Կառավարությունը:

Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ե» ենթակետով նախատեսված սողանքային տարածքները սահմանում է Կառավարությունը:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 33-րդ հոդվածի՝

1. 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Զրավագանային կառավարման պլան չունեցող տարածքներում ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը չի կարող 5 տարուց ավելի լինել, բացառությամբ

հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու նպատակով տրամադրվող ջրօգտագործման թույլտվությունների»:

2. 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու նպատակով ջրօգտագործման թույլտվության համար դիմած անձին (անկախ տվյալ տարածքում ջրավազանային կառավարման պլանի առկայության հանգամանքից) ջրօգտագործման թույլտվությունը տրվում է 1 տարի ժամկետով, որը լիցենզիայի ստացման դեպքում համարվում է երկարաձգված՝ լիցենզիայի ժամկետին հավասար, բայց ոչ ավելի, քան 20 տարին, եթե ջրավազանային կառավարման պլաններով այլ ժամկետ սահմանված չէ, որի դեպքում ջրօգտագործման թույլտվությունը համարվում է երկարաձգված ջրավազանային կառավարման պլանով նախատեսված ժամկետով: Ջրավազանային կառավարման պլանների հաստատումից կամ դրանցում փոփոխություններ կատարելուց հետո նախկինում տրամադրված ջրօգտագործման թույլտվությունները ենթակա են վերանայման»:

Հոդված 3. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից՝
  - 1) Կառավարությունը մեկ տարվա ընթացքում սահմանում է այն գետերի ցանկը, որոնցում առկա են Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր, որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է.
  - 2) Կառավարությունը երկու տարվա ընթացքում սահմանում է այն գետահատվածները, որտեղ առկա են սողանքային տարածքներ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐԵՈՒՄ ԼՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հունիսի 4-ի ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 30.1-րդ հոդվածը լրացնելիս հետևյալ բովանդակությամբ նոր 2-4-րդ մասերով.

«Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված մերժման հիմքերից բացի նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերը մերժվում են նաև, եթե՝

- 3) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը նախատեսվում է այն գետերի վրա՝
  - ա. որոնցում առկա են Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր.
  - բ. որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է.
  - գ. որոնց վրա կան ջրաչափական դիտակետեր և նախատեսվող ջրառի և ջրահեռացման միջերը շրջանցում են ջրաչափական դիտակետերը:

- 4) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումն իրականացվում է՝
  - ա. Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում,
  - բ. բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտիներում,
  - գ. բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում,
  - դ. ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիներում,
  - ե. գետերի հոսքի ձևավորման տարածքներում,
  - զ. գետահատվածներում, որտեղ առկա են սողանքային տարածքներ,
  - է. անտառային հողերում կամ տարածքներում, որտեղ շինարարական տարածքին մոտեցող ճանապարհներ կառուցելու նպատակով առաջանում է ծառեր հատելու անհրաժեշտություն,

բացառությամբ Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 20-րդ հոդվածով նախատեսված պետական անտառային հողերում աշխատանքների իրականացման համաձայնության առկայության դեպքերի:

Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված գետերի ցանկը սահմանում է Կառավարությունը:

Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ե» ենթակետով նախատեսված սողանքային տարածքները սահմանում է Կառավարությունը:»:

- Deleted: ա
- Deleted: բ
- Deleted: գ
- Deleted: դ
- Deleted: ե
- Deleted: զ

**Հոդված 2.** Օրենսգրքի 33-րդ հոդվածի՝

- 3. 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
  - «Զրավագանային կառավարման պլան չունեցող տարածքներում ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը չի կարող 5 տարուց ավելի լինել, բացառությամբ հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու նպատակով տրամադրվող ջրօգտագործման թույլտվությունների:»:

4. 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու նպատակով ջրօգտագործման թույլտվության համար դիմած անձին (անկախ տվյալ տարածքում ջրավազանային կառավարման պլանի առկայության հանգամանքից) ջրօգտագործման թույլտվությունը տրվում է 1 տարի ժամկետով, որը լիցենզիայի ստացման դեպքում համարվում է երկարաձգված՝ լիցենզիայի ժամկետին հավասար, բայց ոչ ավելի, քան 20 տարին, եթե ջրավազանային կառավարման պլաններով այլ ժամկետ սահմանված չէ, որի դեպքում ջրօգտագործման թույլտվությունը համարվում է երկարաձգված ջրավազանային կառավարման պլանով նախատեսված ժամկետով: Ջրավազանային կառավարման պլանների հաստատումից կամ դրանցում փոփոխություններ կատարելուց հետո նախկինում տրամադրված ջրօգտագործման թույլտվությունները ենթակա են վերանայման:»:

**Հոդված 3. Անցումային դրույթներ**

- 3) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
- 4) Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից՝
- 3) Կառավարությունը մեկ տարվա ընթացքում սահմանում է այն գետերի ցանկը, որոնցում առկա են Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր, որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է:
- 4) Կառավարությունը երկու տարվա ընթացքում սահմանում է այն գետահատվածները, որտեղ առկա են սողանքային տարածքներ:

Deleted: Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացված [Կ-100-11.04.2019-ՏՏԳԲ-011/1](#)  
 «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», Հայաստանի Հանրապետության  
 օրենքի նախագծի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

| Առաջարկության հեղինակը                    | Առաջարկության բովանդակությունը   | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը  | Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|--|---|---|
| ՀՀ ԱԺ «Իմ քայլը» խմբակցության առաջարկները | 1. Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետում լրացնել նոր ենթակետ հետևյալ խմբագրությամբ. «Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում արգելվում է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը»:  | 1. Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն՝ նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետը լրացվել է նոր ենթակետով:   | Ընդունվել է   |
| ՀՀ ԱԺ «Իմ քայլը» խմբակցության առաջարկները | 2. Օրենքի նախագծի 1-ին հոդվածի «Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված գետերի ցանկը սահմանում է Կառավարությունը» բառերից հետո լրացնել «ինչպես նաև գետերի այն հատվածները, որտեղ կարելի է կառուցել փոքր հիդրոէլեկտրակայաններ:» | Պարզաբանում: Նախագծով սահմանվում են նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժման հիմքեր: Նախագծով հստակեցվում են այն գետերն ու գետահատվածները, որտեղ արգելվելու են փիկերի կառուցումը, իսկ ներկայացված առաջարկությունը դուրս է սույն նախագծի կարգավորման շրջանակից: Միաժամանակ, ցանկացած գետահատվածից ջրօգտագործման թույլտվություն տրամադրելու որոշումը կայացնելիս Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը | Քննարկվել է   |

|  |   |  |                    |
|--|---|--|--------------------|
|  |   | <p>առաջնորդվում է սահմանափակ ջրային ռեսուրսները մրցակցող շահագրգիռ կողմերի միջև բաշխելու գերակայությունները սահմանող մի շարք չափանիշներով, առաջնահերթությունը տալով մարդկանց բարեկեցության և շրջակա միջավայրի պահպանությանն ու բարելավմանը՝ առաջին հերթին ապահովելով խմելու ջրամատակարարման և ջրահեռացման գերակայությունը:</p> |                    |
| <p>ՀՀ ԱԺ «Իմ քայլը» խմբակցության առաջարկները</p> | <p>3. Նախագծում նախատեսել ևս մեկ հողված, որով կսահմանվի, թե ի՞նչ ժամկետում պետք է կառավարության կողմից ընդունվեն այդ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը</p> | <p>3. Ընդունվել է, նախագծի 3-րդ «Անցումային դրույթներ» հողվածում կատարվել է համապատասխան լրացում՝ սահմանվել են կառավարության կողմից ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման ժամկետները:</p>   | <p>Ընդունվել է</p> |